11239

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«31» 07 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0137-23

Ձեռնարկողը՝ ***« ԱՍ ՇԻՆ 80» ՍՊԸ***
Սյունիքի մարզ, Տեղ բնակավայր, Արցախի խճուղի, փ.11

Գործունեությունը՝ ***Տեղի անդեզիտաբազալտների հանքերևակման տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 6 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0137-23

«31» 07 **2023թ.**

Սյունիքի մարզի Տեղի անդեզիտաբազալտների հանքերևակման տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԱՍ ՇԻՆ 80» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Տեղ բնակավայր

Ներածական մաս. Սյունիքի մարզի Տեղի բազալտային անդեզիտների երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Աշխատանքների համար ընտրված տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Տեղ բնակավայրի սահմաններում: Հետախուզվող տեղամասը գտնվում է Քարաշեն-Տեղ ավտոճանապարհի ձախ կողմում՝ Տեղ գյուղից 1.15կմ դեպի արևմուտք, Քարաշենից շուրջ 4.7-5.0կմ հյուսիս-արևելք, Արավուսից 720մ, Խնձորեսկից 5.4կմ դեպի հյուսիս-արևելք: Տեղ բնակավայրի մոտակա բնակելի շինությունները գտնվում են հայցվող տարածքից 80-180մ, հեռավորությունների վրա (ուղիղ գծով):

Հանքավայրի տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերով:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետի:

Նկարագրական մաս. Սյունիքի մարզի Տեղի բազալտային անդեզիտների երևակման երկրաբանական ուսումնասիրության տարածքն ըստ „Инструкция по применению классификации запасов к месторождениям строительного и облицовочного камня“ հրահանգի, երկրաբանական կառուցվածքի, բարդության և երկրաբանական հայտանիշների փոփոխականության աստիճանի, վերագրվում է առաջին խմբին:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակն է որոշել օգտակար հանածոյի շերտախմբի հզորությունը, պարզաբանել օգտակար հանածոյի որակական հատկանիշները և դրանց պիտանելիությունը որպես շինարարական քար, ինչպես նաև շինարարական խիճ և կոպիճ օգտագործելու նպատակով, որը կհամապատասխանի «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-95, իսկ բլոկների արդյունահանման թափոնների և օգտակար հաստվածքի մերձմակերեսային շերտի ուժեղ ճեղքավորված շերտախմբի պիտանելիությունը հումք շինարարական կոպճի (ՀՍՏ ԳՕՍՏ 8267- 98), խճի (ՀՍՏ ԳՕՍՏ 2374-84) և ավազի (ՀՍՏ ԳՕՍՏ 8736-2014) արտադրության համար, ինչպես նաև ճանապարհաշինարարության պաստառահումք և ծանր բետոնի լցանյութ: Երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրած տարածքը սահմանափակվում է ստորև նշված ծայրակետային կոորդինատներով (ARM WGS – 84 համակարգով).

X=4381499.37 Y=8625677.04
X=4381429.26 Y=8625662.66
X=4381286.25 Y=8625877.88
X=4381361.25 Y=8626098.26
X=4381400.30 Y=8626090.10
X=4381476.30 Y=8625905.67

Հետախուզումը նախատեսնվում է իրականացնել մինչև 12-ից 25մ խորությամբ 6 հորատանցքերի, 3 մերկացումների և փորձնական բացահանքերի միջոցով, կատարելով համապատասխան փաստագրման և նմուշարկման աշխատանքներ: Նախատեսվում է հորատումը կատարել ընդհանուրը 117մ ծավալով, 3 հետախուզական գծերի վրա:

Հորատումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված խմբի կողմից KAMA3 մակնիշի POLE-HOLE DIGGER հորատող հաստոցով կարծր համաձուլվածքային թագիկներով, 103մմ նախնական և 93մմ վերջնական տրամագծով: Օգտակար հանածոյի հորատհանուկի գծային ելքը պետք է կազմի 98%:

Տեղամասում նախատեսվում է մերկացումների փաստագրման աշխատանքներ, ընդհանուրը 27գծ.մ ծավալով, այդ թվում 1-ին մերկացում 9.5 գծ.մ ծավալով, 2-րդ մերկացում՝ 8.5մ և 3-րդ մերկացում՝ 9 գծմ ծավալով:

Նախատեսվում է կատարել փորձնական արդյունահանում բազալտային անդեզիտների զանվածից բլոկների ելքի տոկոսը որոշելու համար:

Նախատեսվում է անցնել 1 բացահանք 25մ^2 ընդհանուր մակերեսով, 100մ^3 ծավալով, որից 11.5մ^3-ը հողաբուսական շերտն է: Ընդ որում, բացահանքի անցման ժամանակ հողաբուսական շերտը և փուշտան կհեռացվի առանձին և կկուտակվի բացահանքի անմիջական հարևանությամբ, հետագայում կօգտագործվի ռեկուլտիվացիոն աշխատանքների համար: Հողաբուսական շերտի հզորությունը տատանվում է 0.35-0.5մ սահմաններում:

Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական հորատասեպային եղանակով, օգտագործելով բուլդոզեր և էքսկավատոր, IV և VII կարգի ամրության ապարներում:

Նմուշների ընդհանուր քանակը կկազմի 30/23 հատ հորատանցքերից, 3 հատ մերկացումներց, 2-ը փորձնական բացահանքիցև 2 համախառը նմուշ/:

Նմուշարկումը բացահանքից և մերկացումներից պետք է կատարվի ակոսային եղանակով: Նմուշները պետք է ունենան մինչև 2.0մ երկարություն, 0.1մ լայնություն և 0.05մ խորություն: Նմուշները պետք է վերցվեն օգտակար հանածոյի շերտին ուղղահայաց:
Նախատեսվում է վերցնել նաև 2 համախառը նմուշ, հողմահարված, ճեղքավորված բազալտային անդեզիտները որպես խճի հումք պարզելու համար:
Այդ նմուշները «Անալիտիկ» ՓԲ ընկերության լաբորատորիայում կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների: Քիմիական և պետրոգրաֆիական հետազոտությունները կկատարվեն ՀՀ ԳԱ երկրաբանական ինստիտուտում:
Քիմիական և պետրոգրաֆիական հետազոտությունների համար նախատեսվում է վերցնել 2-ական նմուշ:
Կկատարվեն տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ դիտարկումների միջոցով և ապարների ճառագայթահիգիենիկ իրավիճակի ուսումնասիրություններ, ռադիոակտիվ դիտարկումների միջոցով: Տեղամասում նախատեսվում է կատարել նաև ռադիոակտիվ ճառագայթման չափումների СРП 68-01 սարքավորման միջոցով:
Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1: 100 մասշտաբով:
Այդ աշխատանքների ծավալներն են.
- հորատհանուկի փաստագրում - 117 գծ.մ
- մերկացումների փաստագրում – 27գծ.մ
- փորձնական բացահանքի փաստագրում- 8.0գծ.մ
Ընդամենը - 152գծ.մ:
Նմուշարկման ժամանակ սեկցիայի երկարությունն ընդունվում է 5մ, հանուկային նմուշների քանակը կկազմի 23 նմուշ:
- մենաքարերի վերցնում փորձնական բացահանքից 2 նմուշ,
- մենաքարերի վերցնում մերկացումներից՝ 3 նմուշ,
- համախառը նմուշի վերցնում՝ 2 նմուշ:
- Քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 2 նմուշ և քարաբանական կազմի ուսումնասիրման նպատակով 2 նմուշ:
Ընդհանուր առմամբ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար նախատեսվում է վերցնել 30 նմուշ, այդ թվում 23 հանուկային և 5 մենաքարային նմուշ, 2 համախառը, որոնք կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում: Բազալտների քիմիական կազմի որոշման նպատակով նախատեսվում է վերցնել 2 նմուշ: Նախատեսվում է կատարել նաև ապարակազմական (պետրոգրաֆիական) հետազոտություններ, որի համար պետք է պատրաստվի 2 հղկուկ: Պետրոգրաֆիական և քիմիական ուսումնասիրությունները կկատարվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանական ինստիտուտում:
Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերը, փորձնական բացահանքը և բնական մերկացումները:
Հորատումից ստացված ամբողջ հորատհանուկը ենթարկվում է նմուշարկման: Նմուշարկումը սեկցիոն է: Հորատհանուկի միջին տրամագիծը 76մմ է:
Նախատեսվում է 6 հորատման հրապարակների և դրանց մոտեցման ճանապարհների նորոգում /անհրաժեշտության դեպքում/ մեխանիկական եղանակով 4-րդ կարգի

ապարներում: Կկառուցվի 6 հորատման հրապարակ, յուրաքանչյուրը 40մ^2 մակերեսով: Ընդհանուր մակերեսը կկազմի՝ 6x40=240մ^2:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը /0.46մ/, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆթի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով:

Հորատահարթակների ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր ծավալը կազմում է. 71.76մ^3:

Փորձնական բացահանքի անցման ժամանակ հողաբուսական շերտի /անդեզիտների բեկորների պարունակությամբ/ ծավալը կազմում է 11.5մ^3:

Բուսածածկը խախտվելու է 265մ^2 տարածքում:

Տեղամասի ռեկուլտիվացիայի ընդհանուր մակերեսը կկազմի 265մ^2, իսկ ծավալը կկազմի 83.26մ^3:

Աշխատանքերը կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 119250 դրամ:

Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքին կկազմի 0.027հա x 350000 = 12150դրամ:

Տեղի երևակման տարածքում սողանքային մարմիններ չեն արձանագրվել:

Երևակման տարածքում ջրային հոսքեր չկան: Տեղ գետակը հոսում է հայցվող տարածքից 0.83-0.88կմ հեռավորությունների վրա:

Ըստ հայտում եղած տեղեկատվության, կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Տեղի երևակման տարածքը ներառված չէ որևէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Ամենամոտ գտնվող բնության հուշարձաններն են «Խորձոր» V-աձև կիրճ, «Անանուն» էրոզիոն ռելիեֆը և «Սատանա» բնական քանդակը, դրանք գտնվում են երևակման տարածքից մոտ 7.5կմ, 8.5կմ և 9.4կմ հեռավորությունների վրա:

Տեղ բնակավայրի պատմամշակութային հուշարձանները գտնվում են Տեղի բազալտային անդեզիտների երևակման տարածքից 0.46-6.3կմ հեռավորությունների վրա:

Մակաբացման ապարները ներկայացված ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներով (հողաբուսական շերտ) և բազալտների, անդեզիտաբազալտների բեկորներով: Աշխատանքների ընթացքում հորատման հրապարկների և փորձնական բացահանքի տարածքից հեռացվելու է 83.26մ^3 հողաբուսական շերտ (որից՝ 11.5մ^3 փորձնական բացահանքի տարածքից, 71.76մ^3 հարթակների տարածքից) և 29մ^3 փուշտա շերտի ապարներ :

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում Տեղ բնակավայրի տարածքում գործող մասնագիտացված կազմակերպություններում: Տեղի երևակման տարածքում բանեցված դիզելային յուղերի և բանեցված շարժիչների յուղերի թափոնների պահեստավորում, պահպանում չի նախատեսվում:

-Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ 60լ ծավալով ամուր պոլիէթիլենային տոպրակներով, տեղափոխվում մոտակա կազմակերպված

աղբավայր համաատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:
- Փորձնական բացահանքի, հորատման հարթակների և մոտեցնող ճանապարհի խոնավեցում չորային եղանակներին:
-Կեղտաջրերի հավաքում բետոնապատ հորատիպ զուգարանում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով: Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով:
-Հորատման հարթակների շինարարության և փորձնահան բացահանքի անցման ժամանակ վերին հողաբուսական (0.35-0.5մ, միջինը 0.46մ հզորությամբ) շերտի հեռացում, կուտակում աշխատանքների տարածքի անմիջական հարևանությամբ՝ կարճաժամկետ կտրվածքով:
Ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
-Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումներ շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ:
-Հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ:
-Վայրի բնություն, կենսամիջավայրի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:
-Աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ տարեկան մեկ անգամ:
Մշտադիտարկումների վրա տարեկան նախատեսվում է ծախսել 715.0հազ.դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Սյունիքի մարզի Տեղի անդեզիտաբազալտների հանքերևակման տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Տեղ բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Սյունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
-Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
-Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել

անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՍ ՇԻՆ 80» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Տեղի անդեզիտաբազալտների հանքերևակման տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան